ԺԸ. ԵՐԿՊԱՌԱԿՈՒԹԵԱՆ ԽՆՁՈՐԸ

Լեռների մերկ գագաթները պատեց երեկոյեան ստորը, իսկ ծորերի մէջ լոյսը հետզհետէ աղօտ գոյն էր ստանում, միայն ոսկեգոյն ամպերը, որոնք ահագին բեկորներով գլորւում էին օդի բարձրութեան մէջ, դեռ արտափայլում էին հանգչող արեգակի վերջին ճառագայթների ծիրանի շառաւիղներով:

Գեղեցի՜կ երեկոյ էր, լեռնային երեկոների այն ժամը, երբ քա՜ղցր հնչում են հովիւների երգերը, երբ ախո՜րժ է լսել արօտից դարձող ոչխարների խառնաձայն բառաչմունքը եւ ձիերի երամակների ուրախ խրխինջը, որոնք կայտռելով վազում են դէպի իրանց գիշերային օթեւանը: Նոյն ժամուն թեթեւ քամին նազելով քսքսւում է քո երեսին եւ բարակ մելոդական հնչումներով մրմնջում է՝ «շնչի՜ր լի կուրծքով անուշահոտութիւնը, որ ես խլել եմ հազարաւոր ծաղիկներից»:

Բայց ինձ զգալի չէին այս ձայները, ես չէի լսում ոչ զեփիւռի մեղեդին եւ ոչ հովոի երգը, ինձ գրաւել էր միայն Մարօն, միշտ նրան էի տեսնում եւ նրա ձայնը լսում, թէեւ նա ամենեւին չէր խօսում:

Մեր վերադարձը դէպի Կ. գիւղը տեւեց բաւականին երկար, որովհետեւ այժմ բոլորովին այլ ճանապարհով էինք գնում: Մութը վաղուց պատել էր, եւ ամառային գիշերի աստղերը վառւում էին հիանալի փայլողութեամբ:

Խօսակցութեան առարկան նոյն աւուր որսորդութիւնն էր. ծերունի Աւօն հանաքներով ծաղրում էր Ասլանի եւ Սագօյի անճշտութիւնը, որոնց երկուսի նետումները ղաբանը սպանելու համար անցել էին իզուր: Սագօն աշխատում էր իւրեան արդարացնել զանազան պատճառներով. իսկ Ասլանը ոչինչ չէր պատասխանում, նա ընկած էր, որպէս երեւում էր, խիստ տխուր մտատանջութեան մէջ: Սովորականից ուրախ էր Կարօն. նա խորին եղբայրական բարեսրտութեամբ ձեռքը դրեց իմ ուսին, ասելով.

— Դու առանց սրտի չես, Ֆարհատ, քեզանից մի բան կը դուրս գայ...

Մարօն գնում էր մեզանից առաջ իւր հօր հետ: Նա բոլորովին լուռ էր. կարծես, նրա հպարտութեանը ընդդէմ էր լսել այն գովեստները, որոնք թափում էին նրա վրայ. եւ կամ նա չէր ուզում յիշեցնել, թէ որպիսի դժոար դրութիւնից ազատեց ինձ. նա աշխատում էր, որ այդ դէպքի վրայ խօսացոի որքան կարելի է սակաւ:

Ես բաւականին ետ մնացի իմ ուղեկիցներից, խօսում էի Կարօյի հետ: Սագօն մօտեցաւ մեզ, եւ առանց որեւիցէ առիթի մեր կողմից, որպէս ինքն իրան խօսելով ասաց.